

Այրը մտնելու ժամանակ իսկոյն կը նշմարուի բաւական կանոնաւորութեամբ մեծ փորուածք մը (Bar. gd. էջ 353—358): Աւանդաբար կ'ըսուի թէ Ս. Ընտանիքը եզրպտոսէ վերադարձին կանգ առաւ Կարմեղոսի Ս. Եղիայի այս այրին մէջ: Գոնէ ստոյգ է որ անոր մօտէն անցած է: Քանի մը քայլ հեռու է այն ճանապարհէն որ կուգայ Եզրպտոսէն, Գազայի եւ Կեսարիոյ ծովեզերքի վրայով: Ս. Յովսէփ իմանալով որ Արքեղայոս կը թագաւորէր Հրէաստանի մէջ, ուզեց անկէ խոյս տալ Նազարէթ երթալով (Մատթ. Բ. 22): Կը թուի թէ ան հետեւած է գրեթէ այս ծովեզերքի ճամբուն (D. Bl. բառն Carmel):

ԺԳ. Գ Ա Լ Ի Լ Ի Ա

Ի սկզբան Գալիլիա անունը, երբայցերէն Գալիլայ շրջանակ, գաւառ, մի միայն կը տրուէր Աւետեաց երկրի հիւսիսային կողմերուն: Ան կը բովանդակէր քսան քաղաքներ զոր Սողոմոն Տիւրոսի թագաւորին ընծայեց Երուսաղէմի Տաճարին շինութեանց ժամանակ կատարած ծառայութեանց փոխարէն: Այն ատեն այս երկրին մէջ կը գտնուէին շատ հեթանոսներ, որոնց պատճառաւ երկիրը կոչուեցաւ Գալիլիա հեթանոսաց (Եւ. Ա. 9): Եսայիի ժամանակ Գալիլիան կը տարածուէր մինչև Տիբերական լճին եզերքը, եւ ընդհուպ կը բովանդակէր նաև Էստրըլոնի դաշտը: Ի վերջոյ մեր Տիրոջ ժամանակ, ան կը պարփակէր Ասէրի, Նեփթաղէմի, Զաբուղոնի և Իսաքարի ցեղերուն երկիրները: Ան սակայն բաժնուած կը մնար վերին եւ ստորին Գալիլիաներուն. առաջինը կը տարածուի Աք-